ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1544

25.05.2015թ.

ՀՀ ոստիկանության պետ՝
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի մայիս ամսվա այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Կապանի ՁՊՎ և արձանագրել էր թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. ՁՊՎ-ի տեսակցության սենյակը ծառայում էր որպես պահեստ և չէր օգտագործվում իր նպատակին:
2. Բուժսենյակի սավանը գտնվում էր կեղտոտ վիճակում:
3. Լոգարանը մաքուր էր, իսկ զուգարանը գտնվում էր հակասանիտարական և կեղտոտ վիճակում:
4. Սննդի տաքացման սենյակում բացակայում էր սննդի տաքացման համար նախատեսված տաքացուցիչը, որի վերաբերյալ պատասխանատու ոստիկանը պատասխանեց, որ անհրաժեշտության դեպքում, բաժնի հերթապահ մասի տաքացուցիչով են սնունդը տաքացնում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄՏՈՒ № 3359
26. 05

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄՏՈՒ № 2339
26. 05

Խախտումներ՝

1. ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը ուսումնասիրելով, արձանագրվել է, որ

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

- Արմեն Գավրոշի Խաչատրյանը բերման է ենթարկվել 24.02.2015թ-ին ժամը 16.20-ին, ձերբակալվել է նույն օրը, ժամը 22.50-ին, դատարան է տեղափոխվել և կալանավորվել է 27.02.2015թ-ի ժամը 21.00-ից մինչև 22.30 ընկած ժամանակահատվածում:

- Ռուբեն Գագիկի Կարապետյանը բերման է ենթարկվել 24.02.2015թ-ին ժամը 16.20-ին, ձերբակալվել է նույն օրը, ժամը 23.20-ին, կալանավորվել է 27.02.2015թ-ին ժամը 21.00-ից մինչև ժամը 23.00 ընկած ժամանակահատվածում:

Երկու անձանց էլ ՀՊՎ-ում անազատության մեջ պահել են 72 ժամից ավելի և խախտվել է նրանց ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված 16-րդ հոդվածը: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ -1,2/*

2. ՀՊՎ-ում պահվող ձերբակալված Դավիթ Ալբերտի Համբարձումյանի հետ առանձնազրույցի ընթացքում Դիտորդական խմբին հայտնեց, որ ինքը ստացել է հանձնուք, բայց Դիտորդական խումբը ուսումնասիրության ընթացքում պարզեց, որ տվյալ հանձնուքի վերաբերյալ գրանցամատյանում չկա ոչ մի գրառում: Հանձնուքը ընդունելու վերաբերյալ չհերքեց նաև ՀՊՎ-ի հերթապահ ոստիկանը:

3. Անդրանիկ Արկադիի Խաչատրյանը 15.05.2015թ-ին ժամը 13.10 –ից մինչ Դիտորդական խմբի այցելությունը, գտնվում էր ՀՊՎ-ում և նրան չէին տրամադրել անկողնային պարագաներ: Նշված փաստի վերաբերյալ պատասխանատու ոստիկանները փաստեցին, որ կալանավորը չի ցանկացել սպիտակեղեն, որը տվյալ ոստիկանների համար հանդիսացել է բավարար հիմք սպիտակեղեն չտրամադրելու համար, առանց պարզելու պատճառները և սպիտակեղեն չտրամադրելու արդյունքում հնարավոր վնասները:

4. Դիտորդական խումբը ինչպես ՀՊՎ-ում պահվող անձանց, այնպես էլ հերթապահություն իրականացնող ոստիկանին տվել են նույն հարցը, <<ինչ սնունդ եք տրամադրել և ինչ սնունդ եք ստացել>>:

- ՀՊՎ-ում պահվող անձիք հարցին պատասխանել են, որ ոչինչ չեն ցանկացել ու չեն օգտվել:

- Հերթապահ ոստիկանը մեկնաբանեց, որ տրամադրել են կարկանդակ, ***արևածաղիկ***, թեյ և սուրճ և որ պահվող անձիք օգտվել են վերը թվարկվածներից:

ՀՊՎ-ում պահվող ձերբակալված Դավիթ Ալբերտի Համբարձումյանի անձնական գործը, իր համաձայնությամբ, ուսումնասիրելուց, Դիտորդական խումբը արձանագրեց, որ արդեն անազատության մեջ գտնվող անձը անհասկանալի պատճառով 15.05.2015թ-ին ժամը

23.35-ին Սյունիքի մարզային քննչական կոմիտեից ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ բերման է ենթարկվել: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ -3/*

Նույն բերման արձանագրության մեջ, արձանագրվել է մարմնական վնասվածք, բայց <<ՁՊՎ-ում պահվող անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում, չկար ոչ մի գրառում մարմնական վնասվածքի վերաբերյալ:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հասմիկ Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

03.07.15թ.
2/2-1-2183

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր 25.05.2015թ. թիվ 2621/1544 գրությանը հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. մայիս ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Սյունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նշված թերություններն արդեն իսկ վերացվել են:

4. ՁՊՎ-ում պահվող անձանց տրամադրվող սնունդը տաքացնելու անհրաժեշտության դեպքում, այն տաքացվում է բաժնի հերթապահ մասի տաքացուցիչով:

Խախտումներ.

1. Ա.Խաչատրյանը և Ռ.Կարապետյանը ոստիկանության Կապանի բաժին բերման են ենթարկվել 24.02.2015թ. ժամը 16.20-ին, հարցաքննվել են հետաքննիչի կողմից և նույն օրը համապատասխանաբար ժամը 17.30-ին ու 17.40-ին ազատ արձակվել, ինչի վերաբերյալ հերթապահ մասի <<ոստիկանության ստորաբաժանում բերված անձանց հաշվառման>> գրանցամատյանում առկա է համապատասխան գրառում, իսկ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչություն: Ա.Խաչատրյանը և Ռ.Կարապետյանը նույն օրը հրավիրվել են Սյունիքի մարզային քննչական վարչություն, որտեղ համապատասխանաբար ժամը 22.50-ին և ժամը 23.20-ին ձերբակալվել ու տեղափոխվել են ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ: Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու քննիչի միջնորդությունը քննության առնելու համար ձերբակալվածներ Ա.Խաչատրյանը և Ռ.Կարապետյանը ՁՊՎ-ից դատարան են տեղափոխվել 27.02.2015թ. ժամը 21.00-ին, որտեղ կալանավորվել են և վերադարձվել ՁՊՎ՝ Գորիսի ՔԿՀ տեղափոխելու համար: Նշված անձանց արգելանքի տակ պահելու սահմանված 72 ժամը չի խախտվել:

2. Ձերբակալված Դ.Համբարձումյանը ս/թ մայիսի 17-ին հանձնուք չի ստացել, այլ ստացել է նախորդ օրը՝ մայիսի 16-ին, որի վերաբերյալ <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանի 115-րդ հերթական համարի տակ կատարվել են համապատասխան գրառումներ: ՁՊՎ ոստիկանը

հանձնուք ընդունելու փաստը չի հերքել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մայիսի 16-ին Դ.Համբարձումյանը ստացել է հանձնուք, ինչից օգտվել է նաև մայիսի 17-ի առավոտյան:

Հարկ է նշել, որ 115-րդ հերթական համարից հետո էլ եղել են բազմաթիվ գրառումներ հանձնունքներ ընդունելու վերաբերյալ:

3. Կալանավոր Ա.Խաչատրյանը ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ-ում պահվել է 2015թ. մայիսի 15-ից մինչև 17-ն, որին տրամադրվել է սպիտակեղեն, սակայն վերջինս հրաժարվել է ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում իրեն տրամադրված սպիտակեղենից: Ծառայողական քննության ընթացքում իր տված բացատրությամբ նշված փաստը հաստատել է նաև կալանավոր Ա.Խաչատրյանը՝ պատճառաբանելով, որ պարզապես չի ցանկանում օգտվել սպիտակեղենից և որևէ բացատրություն չունի:

4. Ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ-ում պահվող ձերբակալված Դ.Համբարձումյանին և կալանավոր Ա.Խաչատրյանին տրամադրվել է անվճար սնունդ, սակայն վերջիններս հրաժարվել են անվճար սննդից, քանի որ ստացել են հանձնուքներ: Նրանց տրվել է սուրճ և կարկանդակ, որը ստացել են հանձնուքի միջոցով, իսկ Ձերբակալված Դ.Համբարձումյանի խնդրանքով իրեն տրվել է նաև արևածաղիկի հատիկներ իր ստացած հանձնուքից, որը պահվել է սննդի տաքացման սենյակում՝ չփչացող սննդամթերքի հետ:

5. Դ.Համբարձումյանին Սյունիքի մարզային քննչական վարչությունից արդեն իսկ ձերբակալվածի կարգավիճակով ոստիկանության Կապանի բաժին բերման ենթարկելու, նրա մոտ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու կապակցությամբ բուժաշխատող չհրավիրելու և <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում համապատասխան գրառումներ չկատարելու համար ոստիկանության Կապանի բաժնի հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ոստիկանության շտաբ